

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոչտային համար 12 ֆրանկ
» » վեցսուսնայ 6 »
» » վեցսուսնայ 14 »
» » վեցսուսնայ 7 »
ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռանգի դրակի հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՓԱՂԱՔԱՆԵՐ՝ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին ամբող-
ջովին կամ մասամբ:
Իրանուցման տոյր 20 սանթիմ. երե-
փեկ անկի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԱՆԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Մեր ազգային գործերուն մէջ
ամէնէն աւելի աւեր գործող հան-
գամանքներէն մէկն է մեր ան-
կարգապահութիւնը, որ կարծես
մեզի երկրորդ բնութիւն մը եղած
է: Պարտականութեան զգացումը
մեր մէջ այնքան թուլ է որ ամէն
պաշտօն, ամէն գործ կը կատա-
րենք չէթէ իբր իրական պարտա-
կանութիւն, որոյ մասին զանցա-
ռութիւն ամօթալի ու դատա-
պարտելի ըլլալ, այլ իբր շնորհ
մը զոր մեզ կը թելադրէ ընել
մեր ընդարձակ ազգասիրութիւնը:

Ասոր բնական հետեւանքը սա
միայն կրնայ ըլլալ և է որ պաշ-
տօնեայն պէտք չի զգար խղճմ-
տութեամբ, ճշգրտութեամբ կատա-
րելու իր պաշտօնի պարտականու-
թիւնները, ոչ ալ ճանաչելու իր
իրաւասութեան սահմանները: Եւ
ի՞նչ հարկ այդպէս ընելու: Չէ՞
որ շնորհը կամաւոր է և հետե-
ւապէս ստիպում, հարկ չընդու-
նել:

Չեմ կարծիր որ չափազանցու-
թիւն ըլլայ ըստ ձեռք:

Ուր է այն մարդը որ երբ ժո-
ղովրդի քուէով պաշտօնի մը, օ-
րինակի համար, թաղ. խորհուրդի
մը անդամակցութեան կը կոչուի,
սիրայօժար ստանձնէ այդ պաշ-
տօնը իբր պարտականութիւն եւ
ոչ ինչ որ է նկատուածներէ քոյու-
վին անկախ կերպով: Պարտա-
կանութեան զգացումէն շատ տար-
բեր բաներն են միշտ որ կը մղին
մեզ գործի գլուխ անցնելու: Յու-
ցամուրթիւն և այլ փոքրիկ փա-
ռասիրութիւնները գլխաւորապէս
ծանր կը կշռեն այս պարագային
մէջ: Մեր մէջ ընդհանրացած սո-
վորութիւն մըն է որ պաշտօնի մը
կոչուած մարդը զայն ընդունելէ
առաջ կը սպասէ որ նախապէս ա-
տոր համար իրեն դիմումներ,
խնդիրներ ըլլան: Իսկ ինչ որ ա-
զաչանքով կընդունուի, պարտա-
կանութեան մը յանձնարարութիւն
չկրնար նշանակել:

Պարտականութենէ դուրս նկա-
տուածներով ստանձնուած պաշտո-

նի մը կիրառութենէն ալ զոհա-
ցուցիչ արդիւնք սպասել տրամա-
բանական չէ: Ինչո՞ւ: Որովհետեւ
պաշտօնեան ինքզինք սերտիւ կա-
պուած չի զգար հաստատեալ օ-
րէնքներու կամ ընկալեալ սովո-
րութիւններուն, որոնք իր պաշ-
տօնի պարտքերն ու իրաւունք-
ները կը գծեն: Նշանակութիւն
մը չունին քիչ կամ շատ պարտա-
զանցութիւն և իր իրաւունքնե-
րուն անտեսութիւն: Իրաւասու-
թեան չըջանալն ալ չպահանջ
այն չափը, զոր օրէնքը սահմանած է:
մերթ կը սեղմուի, մերթ կը լայն-
նայ: ո՞վ գլուխ պիտի յղենցնէ
ճշգրի այդ չըջանալին մէջ շար-
ժելու, երբ մարդուս համար ա-
ւելի դիւրին է և հաճոյ՝ ի հարկին
մէջ կողմէն պարտականութիւն
ները կիսովին կատարել, իսկ
միւս կողմէն իր իրաւասութեան
չըջանալէն դուրս ելնել, այսին-
քով, ուրիշներու իրաւունքները
ոտնակոխ ընել:

Այս է անկարգապահութիւնը:
Մտէք մեր ամէն կարգի ժո-
ղովրդուն մէջ, դիտեցէք իրենց
գործերու եղանակը ու պիտի հա-
մոզուիք որ յաճախ օրէնքէն և
օրինաւորութենէն աւելի ժողովա-
կաններու անհատական հանգա-
մանքներն են որ կաղզեն գործե-
րու ուղղութեան վրայ: Մենք
պաշտօնին և անհատականութիւնը
պաշտօնեայնութեան հետ կը շփու-
ուի: օրինակ, ատենապետը պա-
րագային համեմատ իր իրաւա-
սութեան չըջանալէն դուրս կլած
կը բռնանայ, կը ճնշէ ժողովին
վրայ, կամ տեղի տուած է իր
մէջ ընկերին, որ իսկապէս կը
վարէ ժողովը, մինչ ինք, ատենա-
պետը, իր պաշտօնի անունը միայն
կը կրէ: Նոյն բանը հասկնալու է
ատենադպրին և գանձապահին,
համարակալին և ուրիշ ժողովա-
կաններու իրարու հանդէպ ունե-
ցած դիրքին նկատմամբ:

Լայնցնենք այս չըջանալը և ի
նկատի առնենք ժողովի մը ժո-
ղովրդին հանդէպ, կամ ազգային
ընկերութեան մը վարչութեան անոր
բոլոր անդամակիցներուն հանդէպ
ունեցած օրինական դիրքը: Այս-
տեղ ալ միեւնոյն երևութի կը

հանդիպինք յաճախ, սա տարբե-
րութեամբ որ այս վերջին պա-
րագային մէջ՝ պարտքի և իրա-
ւունքի չափին ու աստիճանին եր-
կուտեք յարգ չընծայուիլը մեծա-
գոյն շփոթութիւն և մեծագոյն
չարիք առաջ կընայ բերել:

Յորչափ չունենանք մտքի և
սրտի բաւական զարգացում լի-
վին ըմբռնելու օրինական մեր
պարտքերը և յարգելու ուրիշին
իրաւունքները, ուրիշ խօսքով,
ցորչափ կարգապահութիւնը չու-
նենանք մեզ ուղեցոյց հանրային
գործերու մէջ, այս վերջինները
պիտի ընթանան միշտ կաղ ու
յամբ:

ՎԵՋ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ԹԻՖԼԻՍ

ՎԵՋ. Կաթողիկոսն նոր տարւոյ
առթիւ ընդունած է հայ հոգեւո-
րականութեան և ամէն դասակարգի
պատկանող բազմաթիւ կարեւոր
անձնաւորութեանց շնորհաւորու-
թիւնները: Քանի մը բարձրաս-
տիճան պաշտօնեայնք զրկած են
իրենց այցաքարտերը:

Հայրապետը յունուար 2 ին այ-
ցելով վրաստանի էքզարք Արք
եպիսկոպոս Վլատիմիրի, մեծ
յարգանք և համակրական ցոյ-
ցելով ընդունուել է նորին բարձր
Սրբազնութենէն, որ նոյն օրը
փոխադարձ այցելութիւն տուած
է Հայոց Հայրապետին:

Ն. Օծութիւնը նոյն օրը Ս.
Աղէքսանտր Նեւաքիի նորակառոյց
օրթոտոք տաճարը տեսնել փա-
փագելով, գնաց հոն և մեծ շքով
ընդունուեցաւ ռուս քահանանե-
րու դասէն, որոց հետեւեալ խօսքն
ուղղու է «կը մաղթեմ որ այս
տաճարին սպասաւորները գործու-
նէութիւնը նոյնքան փառաւոր ըլ-
լայ, որքան փառաւոր է տաճարը»:

Վեհափառը ընդունած է ի մէջ
այլոց թիֆլիսի պարսկական ընդհ-
հիւպատոսին և կովկասեան կըր-
թական շրջանակի հոգաբարձու
և գաղտնի խորհրդական Եանուպի
այցելութիւնները զորս փոխարե-
նեց օր մը ետքը:

Ն. Կայս. Բարձրութիւն մեծ
իշխան Նեքոլա Միխայելովիչ
թիֆլիս գալով և իմանալով որ
Հայոց կաթողիկոսը հոն կը գըտ-
նուի, փութաց այցելել նորին
Օծութեան և անոր օրհնութիւնը
խնդրել: Մեկնելու ժամանակ
Մեծ-իշխանը յայտնեց թէ մտա-
գիւր է չուտով թիֆլիսէ մեկնել և
խնդրեց կաթողիկոսէն փոխա-
դարձ այցելութեան մը նեղու-
թիւնը չկրել:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Մարտի 13/4 Յունվար

Թղթակիցներ ընդհանրապէս
իրենց քննադատութեան առար-
կայ կրնեն կցերը, պաշտօնական
մարմինները և հարուստը՝ ատով
ժողովուրդի շահն պաշտպանել
կարծելով:

Ըսել չեմ ուղիւ թէ իրաւացի
չեն լրագրողներու միջոցաւ հրա-
տարակուած գանգատներն ի մա-
սին եպիսկոպոսին ու հայ կրեսո-
սին: Սակայն ես եթէ ոչ աւելի,
զոնէ նոյնքան քննադատելի կը
գտնեմ ժողովուրդի և անաւագնե-
րու և անգործներու գձուձ անտար-
բերութիւնը:

Մենք ողբալ գիտենք, քիչ մըն
ալ գօտեպնդելով կը համար ձա-
կինք բողոքի շուրջ մը արձակել
և ապա լռել, անուշ տեղ կապել:
Հայ ժողովուրդը քանի որ գործ-
նական բողոքներ չունի, թղթա-
կիցներու քննադատութիւնը կը-
ղերին և անխիղճ փարթամին
դէմ անօգուտ և ամուլ շանք մըն է:

Հայ ժողովուրդը գործով բողո-
քելու է. ինք միայն կարող է
յուզութիւն ածել սեւ հոգիները,
անխիղճ գործողները. լրագրա-
կան տողեր կամ չեն կարգացուիր
և կամ բարբառ յանապատի կը
լինին:

Թղթակցութիւններու մէջ եր-
բեմն իրաւացի դիտողութիւններ
ըրած եմ՝ Մարտի 13 թահանային
մասին, և մտադիր էի իր ապօրինի
չարժուաններն հետզհետէ արձանա-
գրել թերթիդ մէջ. սակայն նա

Իրաւունք չկարգար, և երբ ուրիշ կարգացողներ ալ իրեն բան մը չեն զգացներ խօսքով կամ գործով, որուն համար գրեմ. 15 տեղացիներէ կամ հին գաղթականներէ կը բաղկանայ Մարտէյի հայ ժողովուրդը. ասոնք թէ ժողովուրդ են, թէ թաղական են, թէ հոգաբարձու, և թէ քահանայ . . .

Ո՞վ պիտի ըլլայ սանձարձակ քահանայի մը արարքներուն դէմ՝ բողոքարկու. բանի մը գաղթականներ, որոնք յոյնի սրճարանին տաքուկ անկիւնը թաղուած են. սինչեւ իրկուն կը հայհոյեն, կը խաղան, ու կը խմեն: Օրական 100-200 ֆրանգի գումար մը մէկուն գրպանէն, միւսին մէջ կը ձգուի:

Այս օրեր, նոր տարւոյ առթիւ, քառասունի կերպարանք մը ստացած է խաղամոլութիւնը յոյնի սրճարանին մէջ. նոր տարի է, բաղդերնին պիտի փորձեն, սեւուկ ու դրժոխք բաղդերնին:

Յոյնի սրճարանը խմրուած գաղթականութիւնը պիտի լինի բողոքող ձայնը քահանային դէմ. որը՝ որուն պիտի բողոքէ, ես ալ չեմ գիտեր:

Այս խաղացողներ ճանապարհորդներու առաջնորդներ են, և մի քանի մնայուն գատարկներ:

Սըմաւորներ իրենց շահուանքս պառ աղբիւրն ունին պանդուխտներ, անցորդներ: Միւսներն ալ

նեղը մնացածնուն պէս՝ Ամերիկայէն կամ Տաճկաստանէն եկողի մը կըստանան. չուտով կը գուշակին նորա ստակ ունենալն ու չունենալը, և յանկարծակրի կը բերեն զինեւտան մը անկիւնը:

Վերջին դէպք մը ձեզի գրած էի, որուն հեղինակը անցեալ օր ձերբակալուեցաւ փարիզի մէջ. Պօլսեցի մըն է որ Ամերիկայէ վերադարձողի մը 95-100 սակին գողցաւ ու փախաւ:

Ձերբակալուողն անակունքի գողակիցներու անունն եւս կուտայ եղբւր:

Մարտէյի մէջ ժողովուրդ չիկայ. քահանայ մը կայ, որ երբ ԿԸՐ՝ պանին հնչան դրամի հաւասարակշուրութիւնը կորսուի, պաշտպան կը կանգնի անշափահաս նստիկ մը. շապիկ կը հագցնէ մատան մէջ, և ողորմուկ ձայնով ու սրտայոյզ խօսքերով ամենուն գլխութիւն կը հայցէ խեղճին վերայ:

Պնակ մը կը շրջաբերի, կը հաւաքուի կլորիկ գումար մը որուն մեծ մասը իր ճամբայէն խոտորելով չկրնար հասնիլ սինչեւ պղտիկ թշուառին գրպանը:

Քահանային ընթացքը և շարժումները գիտողներ կը հասկնան թէ կլորիկ շահեր շատ ունի:

Պուրսայի նորընծան, Մարտէյի և փարիզի շիկ միւսիւն դարձած, նիւթական բարւոք վիճակ մը շինած, ազգին ստակով բը-

ժիշկ զուակ մը հասուցած, երբ դեռ չկատարեր իր պարտականութիւնները, ևս կըսեմ թէ յանցանքը ժողովուրդին է որ գործնական բողոքի ձայնը չհնչեցներ այսպիսիներու դէմ:

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Ամիսներ առաջ երբ Սիսակեան ընկերութիւնը կազմաւորուած ու ընթերցարան ալ գոյութեամբ վիճակին հասած էր, և երբ հրապարակով լրագրներու միջոցով գանգատներ կը յայտնուէին, դիտողութիւններ կը ընթերցարանի աս ինկած և վառնայի հայ յուրեան համար անպատուարեք եղող վիճակի մասին, կարգ մը ազգայիններ վերջ մը տալու համար իրերու այս վիճակին՝ ընդհանուր ժողով մը գումարեցին և ընտրեցին նոր վարչութիւնս:

Մենք վստահելով որ հրապարակաւ յայտնուած փափաքները անկեղծ են, և ինքնաբերաբար գումարուող ընդհ. ժողովի անդամները միշտ մեզի պիտի աջակցին, մեզի յանձնուած պաշտօնը սիրով ընդունեցինք և սկըսանք գործի, լոկ օգտակար ըլլալու փափաքէն մղուած:

Նախորդ վարչութիւնէն միմիայն պարտք կտակուած էր մեզի. ընկերութիւնը վերակազմելու, ըն-

թերցարանը շարունակ բաց պահելու համար անհրաժեշտ պէտք ունէինք գումարի մը: Այդ գումարը կարելի չէր գոյացնել նոր անդամավճարներէ և հանգանակութիւն մը ընելու փորձին ալ կարելի չէր ձեռնարկել: Ուստի որոշեցինք թափաբական ներկայացում մը տալ:

Հրատարակուած հաշուեկշիռը կը ցուցնէ թէ որչափ յաջողեցանք մեր այս ձեռնարկին մէջ: Շատ ու շատ խօսքեր լսեցինք, ըսին թէ առեւտր չէ, առեւտր անհրաժեշտ պէտքեր կան գոյացուցիչ, հայր հիմա կարդալու սիրտ չունի. եղան մարդիկ ալ որ կեղծապարիշտ ձեւերով մինչև իսկ յարձակողական դիրք ալ առին:

Այս խօսքերը և սպառնական ձեւերը չէին ազդեցութիւն չըրին մեր վրայ ու մեր ճամբան շարունակեցինք ճարելու համար պէտք եղած գումարը, վճարելու համար հին պարտքեր և լրագրներու նոր բաժանորդագրներ:

Մեր խորին շնորհակալութիւնները բոլոր անոնց որ չը մերժեցին մեզի թէ իրենց դրամով և թէ բաշխելի խօսքերովը յուսադրել:

Իսկ մեր խորին ցաւակցութիւնը անոնց որ, երբ իրենց գիմեւու քաջութիւնը ունեցանք՝ գոնէ իրենք ալ իրենց կողմէ չը մերժելու ազնուութիւնը չունեցան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (7)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՆՅԻՐ

Պետրոս մեծը՝ իր եւ իր յաջորդներու հետեւելիք քաղաքականութիւնը հետեւեալի մէջն էր ամփոփած. «մերձեանալ ըստ կարելւոյն Կ. Պոլսոյ եւ Հնդկաստանի, վասն զի ով որ այնտեղ թագաւորէ՝ աշխարհիս տէրը կը լինի»: Այդ նպատակի հասնելու միջոցներն էին, «չափազորեալ Աւստրիան, Թուրքերը Եւրոպայէն արտաքսելու»: «Չէ՛ղբացնել նորա նախանձը Կ. Պոլսոյ նուաճման ժամանակ»: Ասոր համար պէտք էր Աւստրիան կուռի մղել եւ րոպայի զանազան պետութեանց հետ, կամ նորա տալ նորանուաճ երկիրներէն կտոր մը, զոր յետոյ կարելի լիներ յափշտակել: «Ջանալու է մեր շուրջը հաւաքել բոլոր անդէն ազգութիւնները, և այն բոլոր քրիստոնեայ հետձառնելը, որոնք տարածուած են Թուրքիայի մէջ»: Խնդիրը այն չէ թէ Պետրոս մեծին վերադրուած խօսքերը ը՛ր աստիճան վաւերական են, էականը այն է որ նորա յաջորդներու ուղեցոյցը՝ արեւելեան խնդրոյ մէջ, սկիզբէն սինչեւ վերջը այդ է եղած և է:

Ռուսերը Արեւելեան խնդրոյ մէջ ուժեղանկի մղուեցան աւելի եկադրինէ Բ. Ի եւ Նիկողայոս Ա. ի օրով: Եկադրինէ Բ. ը օգուտ քաղելով այն հանգամանքէն որ եւրոպական միւս պետութիւնները զբաղեալ էին ֆրանսական յեղափոխութեամբ, Տաճկաստանի զոյգութիւնը խնդրոյ ստարկայ ըրաւ. նոյն ձգտումները ունէր և Յովսէփ

Բ.: Աւստրիոյ կայսրը՝ Եկադրինէ և Յովսէփ Բ. ը ոչ միայն ծրագրեցին Պալքանեան թերակղզու մէջ կազմուելիք ապագայ փոքրիկ պետութեանց սահմանները, այլեւ հիւսիսային Շամիրամը իր նորածին թոռանը անունը կոտանողին դնելով, գայն Կ. Պոլսոյ ապագայ ժառանգը յայտարարեց. եւ րոպական պետութեանց պատերազմները թող չտուին Եկադրինէ Բ. ին իրագործել իր ծրագիրը Թուրքիայի նըկատմամբ, բայց այդ ժամանակուայ Արեւելեան խնդրոյ մէջ մասը վճռուեցաւ Լեհաստանի բաժանմամբ: Այսպէս Ռուսները Արեւելեան խնդրոյն մէջ ամենակարեւոր ազգակն եղած են. ոչնչացնել Տաճկաստանը, այդ է նոյա քաղաքականութեան առաջին նպատակը: Երկրորդ ազատել Տաճկաստանը կազմող քրիստոնեայ տարրերը Թուրքի լուծէն, բայց ազատել տիրելու համար: Ռուսաստանը ամէն ժամանակ նպատակ է ոչ միայն խօսքով այլեւ զէնքով Տաճկաստանի՝ ազատութեան գաղափարով շարժող ազգերուն, բայց այն աստիճան որ այդ ազգերը մտածեք, կամ ձգտում են ցոյց տուեր, Տաճկաստանէն ազատուելէն յետոյ ազգային անկախ կեանքի տէր լինել, այն ժամանակ Ռուսները, իրենց նախկին պաշտպանականութիւնը թշնամի եղած են:

Ռուսները մի այլ որոշ քաղաքականութիւն եւս ունին, այն է պահպանել Տաճկաստանը եւ թող չտալ որ օտար տէրութիւններ նորա այս եւ այն մասը ժառանգեն, որպէս զի առիւծի քաժիկը իրենց խնայ: Ռուսական այս քաղաքականութիւնը պարզ կերպով երեւան եկաւ 1833էն մինչեւ 1848. այդ ժամանակ եւս Տաճկաստանի գոյութիւնը խնդրոյ տակ ենթարկուած

էր: Պարսկաստանի մը մէջ Նիկողայոս Ա. ը Անգլիական դեսպան Սէյմուրին մօտենալով ըսել էր թէ, Տաճկաստանը իրեն հիւսանդ մատչելի չկարող գոյութիւն ունենալ. ուստի ինքը իբրեւ միջնորդական կառավարիչ Անգլիային որ քայ իրեն հետ միանայ եւ բաժանեն Տաճկաստանը: Մի քանի տարի յետոյ նոյն Նիկողայոս, էր որ Հիւսիսեայ իսկէլէտիի զաշնադրութեամբ Տաճկաստանի խաբիւրը գոյութիւնը հովանաւորեց, և թող չտուաւ որ Ենիճէա Ալիի օրի հարուածներուն տակ տապալուէր: Ռուսիան հովանաւորեց եւ շատ անգամ կը հովանաւորէ Թուրքիան, ոչ թէ գայն ամրապնդելու, այլ որպէս զի մի օր կարող լինի ամբողջովին իր ձեռքը ձգել գայն: Ռուսիան այս քաղաքականութեան հետեւեցաւ եւ Հայկական խնդրոյն մէջ. մի բարենորոգեալ ինքնավար Հայաստան կարող պիտի լինէր աստիճան մը և գէթ առժամանակ ամրապնդել Թուրքիայի գոյութիւնը: Հայը՝ իբրեւ մի յատկապէս կանգնուած մը կազմել: Փոքր Ասիայի մէջ իսկ այդ ձեռնուած չէր Ռուսական քաղաքականութեան. ուստի նա ոչ միայն ամէն ջանք թափեց 1895 մայիս 11ի ծրագիրը չընդունուելուն, այլեւ Լոպանոֆի յայտարարութեանց միջոցաւ գէթ անուղղակի կերպով քաջալեր եղաւ հայկական կոտորածներուն: Ռուսիան իր պատմական դերի մէջն էր. կարծել թէ Ռուսիան երբ ևս իցէ, այս կամ հանդիմանքի մէջ, ձեռնեցեցութիւն յանձն կառնէ կամ կը նպատակ Հայաստանի ազատութեան եւ անկախութեան, այդ աւելի քան տղիտուութիւն և միամտութիւն կը լինէր, ու-

րովհետեւ կայ այնտեղ պատմութիւն, կան ոռոտական ազգային կեանքի յառաան իրողութիւններ, որոնք բոլորն ալ նախապէս կը հաստատեն:

Այս կամ այն կայսրի փոփոխումը, կամ բարեացակամութիւնը բնաւ չպիտի օգնէ մեզ կարծելու թէ երբ ևս իցէ այդ քաղաքականութիւնը կը փոխուի: Ուրիշ խնդիր է իթէ այդ երկրի մէջ Սահմանադրական իշխանութեան գոյութիւնը մեծ գտնէ, և կառավարութիւնը ամբողջապէս անցնի ազատամիտ կոչուած կողմին ձեռքը, որ գուցէ նպատակէ, նոյն իսկ իր ապահովութեան համար, հայկական իշխանութեան մը հաստատման: Մինչեւ այդ ժամանակ սակայն մենք Ռուսիայէն սպասելիք բան մը չունինք: Պատմական մի մեծ փաստ է որ Ռուսիան ամէն տեղ եւ ամէն ժամանակ հալածեք եւ ոչնչացնել Նիկողայոս Ե. յեղափոխականները եւ յեղափոխական սկըզբունքները, և որովհետեւ քաղաքական ճամբարութիւնն մըն է որ մենք մեր ձգտումներու իրագործումը պիտի յաջողենք միմիայն յեղափոխութեամբ, ուստի պարտինք մեր ձեռնարկներու մէջ ըլլալ ուշիմ ու չընդհանալ եւ յամենայն դէպս միշտ մեր աչքի առջեւ ունենալ Ռուսիան: Այսպէս մենք կարող ըսել Ռուսիային որ մեր ազգային շարժումը հակառուսական ու է գիտում չունի, բայց կարծել որ Ռուսիան պիտի նպատակէ մեր ազգային քաղաքական լրացմանը, կը կրկնեմ. այդ աւելի քան տղայութիւն կը լինէր:

(Շարունակելի)

Թէեւ իրենք ալ մեղի հետ մէկ տեղ կրնային մտածել որ տնտեսական տագնապը և զաղթական թշուառութիւնները արգելք մը չեն ըլլար որ այդ տեսակ երեկոյթները չը լեցուին ազգային ներով: Ամէնուն յայտնի բան մըն է որ ատոնք լոկ պատրուակներ էին:

Ներկայացման հասոյթը թէեւ քիչ լայն վերջ ունէր գերութիւններ ընծայեց: Մաս մը պարտքեր վճարեցինք և լրագիրներու ալ բաժնեգրներ զրկեցինք որով ընթերցարանը կը շարունակէ բաց մնալ:

Ասկէ ետքը մեր բոլոր յոյսը կը մնայ նոր անդամավճարներու վրայ: Իրաւ որ այս մասին ալ մեր ջանքերը շատ գոհացուցիչ արդիւնք տուած չեն ցարդ, սակայն պիտի շարունակենք մեր աշխատութիւնները մինչև փետրվարի վերջը այսինքն մեր պաշտօնին լրանալը:

Կը խնդրենք մեր պատուարժան հրապարակագիրներէն ու յոգուածագիրներէն որպէսզի իրենք ալ այժմէն մեզի աջակցին, գործին յաջողութեան համար:

Վառնա, 12 Յունվար
Յարգանքով
Ի դիմաց Գործ. Ժողովի
Ատենագիր Ատենագիր
Շ. Սոքրիստեան Վ. Մանուկեան
Գանձապահ
Ն. Կ. Պէյլիկեան

ՎԵՆ. ՀԱՅՐԱՊԷՏ ԲԱՆԻՍԻ, ՀԱՆՈՒՄ

Հինգշաբթի Հայրիկին անուան տօնին առթիւ հանգէս կատարուեցաւ քաղաքիս ազգային նորակառոյց շէնքին մէջ ուր եկեղեցական ժամերգութիւնէ հետք դիմած էր երկսեռ խումբ թաղմութիւն մը: Քանի մը ազգ. երգերէ յետոյ, զոր զպիւր մանուկները երգեցին, կաթող. այցելու հովիւ Գեր. Արսէն վարդ. վեհապետի բացատրեց իշխման կաթողիկոսութեան նշանակութիւնը պատմական եղբւրիւնները վրայ հիմնուելով: Խօսեցաւ նաեւ մասնաւորապէս արդի վեհ. կաթողիկոսի մասին որուն յիսնամեայ հանրային գործունէութեան նշանաւոր գիծերը յիշեցուց համառօտիւ:

Կարգացուեցան նաեւ ուղիղքներ և մաղթանքներ Հայրապետին կենաց երկարութեան և ազգին վեհակին բարեւոյցման համար:

Նշանակելի ոգևորութիւն մը կը տիրէր հանգիստտես ժողովրդին մէջ: Հանգէսէն ետք Գեր. վեհապետի ի դիմաց տեղացի և զաղթական ազգայիններու շնորհաւորական հռապեր մը ուղղեց Ն. Օծովեան, իր օրհնութիւնները հայցելով իր պուկարաբնակ հողերու զաւակներու վրայ:

Այս առիթով կը փութանք յայտնել որ թէեւ Տէր Արսէն վեհապետի կը պատրաստուէր եր-

թալ Աւստրիա, որուն նոյնպէս այցելու հովիւ նշանակուած է կաթող. կոնդակով, սակայն Ս. Օրմանեանէ եկած նոր հրահանգի մը վրայ, որ կը պատուիրէր ընդհուպ Պարկիզ երթալ տեղային ազգ. խառնակ գործերը կարգադրելու, Ն. Գերապատուութիւնը որոշած է, ինչպէս մեր նախորդ թիւով ալ ծանուցինք, վաղուան շոգհնամով երթալ ինչեւ թաղաքը:

ԱԶԳ. ԳՈՐԾԵՆԻ Ի ԹՈՒՂԱՄ

Թուլացէն կը գրեն միջ:

Բաւական ժամանակէ ի վեր տեղւոյս հայ զաղթականութեան մէջ սովորական դարձած վեճերն սկսած են անհետանալ: 1890 թուականին Լուսաւորչեան Սա. նուց անուամբ ընկերութիւն մը հաստատուած է հայ երիտասարդաց մէջ: Ընկերութիւնը, շնորհիւ իւր ժրջան ընկերներու գործունէութեան 7,000 ֆրանքի գնած է տարեկան 600 ֆրանք եկամուտ բերող խանութ մը: Այս եկամուտով ընկերութեանը իր կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն մտադիր է զարցըր ուր այժմ միայն 6—7 մանկութիւն կը յաճախեն այն ալ մինչև 7 տարեկան հասակը, ապա Ռոման դըպրոցը երթալու համար, կանոնաւոր նախաընթացի մը վերածելու նպատակ: Աստ պէտք է երախտագիտութեամբ յիշել Կ. Պօլսեցի հանգուցեալ Մարտիրոս Այվազեանը, որ քան տարիներէ հետէ թուլչա հաստատուած էր և որ իր մահունէն առաջ իր բոլոր կալուածները և ապրանքը տեղւոյս դըպրոցին կտակած էր: Բարեկիշ տակ Այվազեան 1896 տարւոյ հոկտեմբեր ամսոյ մէջ մեռնելով, իւր բոլոր ինչքը, շուրջ 7000 ֆր. արժողութեամբ, եկեղեցւոյ և դըպրոցին սեփականութիւն դարձած է, որով մեր ազգային հաստատութիւնները 14,000 ֆր. ի դրամազուլ մը ունեցան: Եւ այս դրամազուլի եկամուտով կարելի է պիտի ըլլայ նախաընթացի մը և քահանայ մը պահել, առանց ինչպէս ցարդ սովորութիւն էր, տուրք հաւաքելու ժողովրդէն, որ շատ քիչ բացառութեամբ աղքատիկ ընտանիքներէ կը բաղկանայ:

Այժմ եթէ ցաւալի բան մը կայ, սա է որ ինչպէս ուրիշ տեղեր, հոս ալ ժողովուրդը երկու կուսակցութեան բաժնուած է, ուրով ազգային գործերը երեսի վրայ կեցած են: Բայց յուսալի է որ, քիչ օրէն երկու կողմն ալ փոխադարձ զոհողութիւններով վերջ տան երկպառակութեան, և միացեալ աշխատին եկեղեցւոյ և դըպրոցի, մանաւանդ այս վերջինին բարեւոյցման:

Այս առիթով կը փութանք յայտնել որ թէեւ Տէր Արսէն վեհապետի կը պատրաստուէր եր-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տրայֆուսի գործը կը զբաղեցնէ տակաւին ֆրանսական ժողովուրդը: Հրամանատար Հալթերհալի անպարտ արձակուելով խնդիրը չի վերջացու: Այս յայտնութեանց հետեւանք, որոնք երեւան եկան

Հալթերհալի դէմ եղած ամբաստանութեանց քննութեան ժամանակ, կառավարութիւնը հարկ տեսաւ ձերբակալել տալու տեղակալ-գնդապետ Բիքար, որ դատաստանի պիտի ենթարկուի:

Սակայն Հալթերհալի գործին կարեւորագոյն հետեւանքն եղաւ Ֆրանսայի արդի նշանաւոր մատենագիրներէն մէկը Ջօլա, դատի ենթարկելու մասին տրուած որոշումը: Ջօլա Հանրապետութեան նախագահին ուղղեալ բաց նամակ մը հրատարակեց որով կամբաստանէր Հալթերհալի գործին նախնական քննութիւնը կատարող պիտուրա-կան պաշտօնեաները, անոր անմեղութիւնը վճռող դատաւորները, պատերազմական նախարարը, սպայակոյտին պետը և ուրիշներ: Իբր Տրայֆուսի թշնամիներ որոնք անձնական շահերէ և նկատումներէ մղուած՝ ամէն միջոցներ գործածեցին ճշմարտութիւնը խեղդելու և Հալթերհալին անպարտ արձակելու համար, որպէս զի Տրայֆուսի անմեղութիւնը երեւան չէլէ:

Բարեկիշ և ֆրանսական ուրիշ քաղաքներու մէջ ուսանողներու և ժողովրդի կողմէ ցոյցեր կը շարունակուին Ջօլայի, Տրայֆուսի խնդրին վերաբարձման հեղինակ և անոր կուսակից Շէօյեր-Քէսլէ-նէրի, ինչպէս նաեւ Սատանայի կողմին բանտարկեալին ցեղակիցներուն, հրեաներուն դէմ որոնց գոյքերն ալ տեղ տեղ զոհ գացին ժողովրդային զայրոյթին:

Ցոյցերը արգելիլ կը ջանայ ոստիկանութիւնը: Բարեկիշ մէջ միայն, ուր յուզումը ամէնէն տեղի է, ժող. երեսուն անձեր վիրաւորուած են խառնաշփոթութեան մէջ: Այժմի մէջ իսկ 6000 հոգիէ բաղկացեալ միթինկ մը տեղի ունեցաւ հրէից դէմ, որ անկարգութեամբ վերջացաւ և հակառակ ոստիկանութեան ջանքերուն՝ հրեան կան խառնութիւն կողոպտուեցան և տուններ յարձակոււմ կրեցին: Խառնութիւնը վերահաստատուեցաւ մէկ մեռելով, բազմաթիւ վիրաւորներ: 40 հոգի ձերբակալուեցան:

— Սիրպիոյ նախկին թագաւորը, Միլան սերպական գործօն բանակին ընդհ. հրամանատար նշանակուելէ ետքը վիէննա գնաց, ուր տեսակցութիւններ ունեցաւ Ֆրանց Եօզէֆ կայսեր և նախարարներու հետ: Ասկէ ծագումն առաւ զրոյց մը, որուն արձագանք եղաւ մամուլը և որուն համեմատ հրամանատար Միլան վիէննա գացած էր Աւստրիոյ և Սերպիոյ միջև քաղաքական նոր կապեր հաստատելու և զաշնապիր մը կնքելու համար: Կիսապաշտօնական և ուրիշ կարեւոր աւստրիական թերթեր կը հերքեն այս տարածախոսութիւնը և կը յայտարարեն թէ Աւստրիա երբեք չպիտի չեղի այն խաղաղասէր և խոհական քաղաքականութեանն որուն՝ Ռուսիոյ հետ համաձայնելով որոշած է հետեւիլ Պալքանեան պետութեանց նկատմամբ, և ինչպէս ցարդ, ասկէ ետքն ալ բնաւ չպիտի միջամտէ անոնց ներքին գործերուն:

ԸՍԵԱՆ

Պիր տէվլէթ, պիր հիւքիւմէթ վէ հախօտ պիր իտարէի ուսու-միյէնին հիւքիւմի ալթընտա պուլը-նան միլլէթլէրին վէ գապիլէրին այագլանուպ վէ սիլահ էլլէրինտէ հուգուգլարընը մուհաֆազայա գալգըշմարընը ըսեան (ապստամբութիւն) թապիր օլունուր: Պուլընան էվլէթէն պերու մէտէնի վէ զայրը մէտէնի բէք չօգ միլլէթլէրտէ կէօրիւմիւշ վէ կէօրիւմէքտէ տիր:

Էն էսկի ասըլարտան պու կիւ-նէ գատար ըսեանա թէշէպպիւս իթմիշ օլան հէր գալմ վէ միլլէթ մուհաֆազասընա չըգըշմըշ օլտըգլարըն հագըր էլէ կէշիւրէն տէկին պիլլէրէն գուրպանլար վէ թէշէ-ֆիյաթ վէրմիշ վէ բէնտի էֆրա-տընըն էն գըլմէթլիւրէրին չօգ տէֆա ֆէտա իթմիշ վէ նիհայէ-թինտէ ազ վէ չօգ մուվաֆագի-յէթ էլէ կէշիւն պիլմիշ տիր:

Միլլէթատիմ զուհուրա կէլմիշ օլան ըսեանլար հիւքիւմէթ վէ հիւքիւմտարընը ֆէնա սուրէթ-տէ միւլքի իտարէ իթմէլէրինտէն վէ թապալարընը թէշէլիգաթ վէ սըգընթըլարա սէվգ էլլէթլէրին տէն վէ մէմուրէյն մէմալիքին ու էհալինին թէրագըրսընա չալըշա-ճագ եէրտէ՝ հալընը քէնտի քէ-սէլէրինի վէ սանտըլարընը սուլ-տուրմայա չալըշմարընտան նէ-շէթ իթմիշ վէ իթմէքտէ օլուպ, էհալի զատարընը եէտի զուլ-մընտան եագասընը գուրթարմագ իշիւն «եա էօլիւմ եա սէրպէսթ-լիք» տէյուպ, հայաթընը թէհ-լիքէյէ սէվգ իտէրէք սիլահ էլտէ քէնտի հուգուգընը միւսաֆազայա գալգըշմըշ վէ գալգըշմագտա տըր:

Հագլթալա ինսանը հիւք եա-րատմըշ օլմաղլէ հէրքէն քէնտի սէլպէստիյէթինի վէ հագըրըն մուհաֆազայա սէլահիյէթտար օլ-տուլը իւլքէ, էշիսա պէյնինտէ զուհուրա կէլէպիլէնէք միւնազա-լարըն սուհուլէթլէ էօնիւնիւ ալ-մագ իշիւն հիւքիւմէթլէր վէ ի-տարէի ուսումիյէլէր թէշէսիս օլ-լընմըշ տըր: Եանի պու կիւն հիւքիւմէթ վէ տէվլէթ թապիր իթ-տիկիմիգ հէյէթլէր քէնտի հիւք-մի տարիէսինտէ պուլընան ագ-վամ ու էշիսաըն ասայիշ ս-հիւսնի իտարէսինէ վէ սատտէ-թինէ իւրտմէթ իթմէք մէմուրի-յէթ իլէ միւլքէլլէթ տիրէր: Էվ-վէթ անլէր էհալինին սատտէթի-նէ չալըշմագ իշիւն թային օլըն-մըշ մէմուրլար՝ Եանի միլլէթին խատէմէսի տիրէր: Մէսէլա՝ պիր չիրքէթին տիրէթթօրը վէ հախօտ բէյիսի օլ չիրքէթին մէնաֆիւսինէ իւրտմէթ իթմէք իշիւն ինթիսապ օլընտըրը կիպի, քէպա մէզըրը տիրէթթօր վագիֆէսինի սուի իս-թիմալ իտէրէք շէրիլէրի միւ-թէզարըն իթտիկի հալտէ, շիւ-

